# ԽԱՂԱԼԻՔԻ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**Լ. Ն. ՔՈՒՐՔՉՅԱՆ**
*Մանկավարժական գիտությունների թեկնածու,*
*ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ*
*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական*
*մանկավարժական համալսարան, Տարիքային և մանկավարժական*
*հոգեբանության ամբիոնի դոցենտ*
**Ա. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ**
*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական*
*մանկավարժական համալսարան, Տարիքային և մանկավարժական*
*հոգեբանության ամբիոնի հայցորդ*

Խաղային գործունեությունն անհնար է առանց խաղալիքների կիրառության, որոնք խաղի համար նախատեսված, հատուկ պատրաստված առարկաներ են, ապահովում են երեխաների և մեծահասակների խաղային գործունեությունը: Դրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ընդհանուր առմամբ ունի առարկայի այնպիսի գծեր, որոնք թույլ են տալիս երեխային վերարտադրել այս կամ այն գործողությունը [2, էջ 92]:

Խաղային գործունեության ընթացքում նախադպրոցականների կողմից խաղալիքների և խաղային առարկաների բազմաֆունկցիոնալ կիրառության հոգեբանական ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում պարզվում է, որ նախադպրոցականների մոտ բավարար չափով ձևավորված չեն համապատասխան խաղային հմտություններ, որի պատճառով նրանք չեն կարողանում խաղային իրադրությունում ընտրել և բազմաֆունկցիոնալ կիրառել խաղալիքներ (մեր կողմից անցկացված գիտափորձի արձանագրող փուլի արդյունքները):

Հոգեբանական հետազոտությունների ձևավորող փուլում որպես հետազոտական խումբ առանձնացվել են նախորդ փուլում մասնակցած կրտսեր և միջին նախադպրոցականների խմբերը: Նկատի ունենալով, որ հետազոտությունը տևելու էր շուրջ մեկ տարի և ավել՝ չընտրվեց ավագ խումբ, քանի որ այդ ժամանակահատվածից հետո հետազոտվող կրտսեր խումբը դառնալու էր միջին, իսկ միջինն էլ՝ ավագ խումբ:

Հետազոտության այս փուլի նպատակն է՝ նախադպրոցականների մոտ ձևավորել խաղային հմտությունների բարձր մակարդակ, որը թույլ կտա

նրանց խաղի ընթացքում խաղալիքները և խաղային առարկաները կիրառել բազմաֆունկցիոնալ:

Այս նպատակն իրականացնելու համար մեր կողմից մշակվել է **«Նախադպրոցականների խաղային հմտությունների ձևավորման և զարգացման ծրագիր»**, որը ներառում է ապլիկացիաների պատրաստման գործնական պարապմունքներ, արտթերապիա, խաղաթերապիա և հեքիաթների ընթերցումներ:

Ծրագիրն իրականացվել է միջին և ավագ նախադպրոցականների խմբերում հետևյալ կառուցվածքով և հաջորդականությամբ:

Ծրագրի սկզբում անցկացվել են **ապլիկացիաների պատրաստման գործնական պարապմունքներ**՝ նպատակ ունենալով զարգացնել՝ ա) երեխաների իմացական գործընթացները, բ) նրանց ձեռքերի մոտորիկան, գ) ինքնուրույն որևէ բան պատրաստելու նախադպրոցականների մոտիվացիան:

Պարապմունքները տևել են 1 տարի, 2 շաբաթում՝ 1 պարապմունք՝ պարզից բարդին անցնելու սկզբունքով: Մեկ տարվա ընթացքում երեխաների կողմից պատրաստվել են 25 ապլիկացիաներ՝ ծնեմարդ, տոնածառ, գնդակ, ձեռնոց, շուն, պինգվին, կիսաշրջազգեստ, մեծ և փոքր ծառեր, ավտոմեքենա, սունկ, գլխարկ, դրոշ, օձ, գորտ, կակաչներ, բու, մրգեր, տերևներ, բաժակ, տղա, աղջիկ, գնացք: Ապլիկացիաների պատրաստման գործնական պարապմունքներն ընթացել են հետևյալ փուլերով, որոնցից յուրաքանչյուրը՝ 5 պարապմունքների ընթացքում:

1. Երեխաներին ցույց է տրվել պատկերի կազմման հաջորդականությունը, պատրաստվել է երեք օրինակ և դրվել երեխաների տեսադաշտում: Նախապես կտրվել են ապլիկացիայի պատկերի համար նախատեսված մասերը՝ նույն գույներով:

2. Երեխաներին տրվում է պատրաստի պատկերը, բայց մասերը կտրվում են տարբեր գույներից՝ հնարավորություն տալով երեխային ընտրել իր նախընտրած գույնը, ցույց է տրվում պատկերը ստանալու հաջորդականությունը:

3. Հաջորդ 5 պարապմունքների ժամանակ երեխաներին տրվում են պատրաստի պատկերներ, բայց դրանց մասերը կտրվում են տարբեր գույներից և տարբեր չափսերով: Երեխաներին միայն մեկ անգամ է ցույց տրվում պատկերի ստացման հաջորդականությունը, բայց նրանց տեսադաշտում դեռ կա պատրաստի պատկերը: Հարցերի դեպքում, երբ երեխաները չեն կողմնորոշվում հաջորդականության կամ մասերի ճիշտ դասավորվածության մեջ, նրանց տրվում են ուղղորդող պատասխաններ:

4. Մյուս պարապմունքների ընթացքումերեխաներին այլևս ցույց չի տրվում պատրաստի պատկերը, պարզապես նրանց առջև դրվում են ապլի-

կացիայի մասերը՝ տարբեր գույներով ու ձևերով և տրվում է հրահանգ. «Պատկերացրո՛ւ և պատրաստի՛ր ինքդ»:

Ապլիկացիոն աշխատանքներին զուգահեռ նախադպրոցականների հետ կատարվել են նաև **արտթերապիայի պարապմունքներ**, որոնց նպատակն է.

- ✓ զարգացնել երեխայի իմացական գործընթացները՝ ուշադրությունը, երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը,
- ✓ զարգացնել նախադպրոցականների մոտորիկան,
- ✓ սովորեցնել, որ խաղային իրադրությունում հնարավոր է բացակայող անհրաժեշտ առարկան պատրաստել ձեռքի տակ եղած այլ իրերով, այսինքն՝ հիմքեր են դրվում խաղալիքի բազմաֆունկցիոնալ օգտագործման համար,
- ✓ նախադպրոցականների մոտ զարգացնել առարկաներն ինքնուրույն պատրաստելու մոտիվացիան, որոնք նրան անհրաժեշտ կլինեն խաղային գործունեության ընթացքում:

Պարապմունքների ընթացքում երեխաները մեր օգնությամբ սովորել են պատրաստել խաղալիքներ, մասնավորապես որպես աշխատանքային նյութ օգտագործվել է խմորը, որի օգնությամբ նրանց սովորեցրել ենք պատրաստել նախ փոքրիկ առարկաներ, ինչպիսիք են՝ գնդակը, սեղանը, տունը և այլն, ապա, ավելի բարդացնելով պատրաստվող իրերը, սկսել ենք պատրաստել դեմքեր՝ մարդկանց և կենդանիների, այնուհետև ամբողջական մարմին: Օգտագործվել են հետևյալ նյութերը՝ ոչ շատ չոր, միջին փափկության խմոր, ջրաներկեր՝ տարբեր գույների, փայտիկներ, որոնց օգնութամբ կարելի է տարբեր նախշեր և գծեր տալ պատրաստվող նյութին:

Պարապմունքների ընթացքում երեխաներին պատրաստի տրվում էր խմորը, նրանց նախ մեկ անգամ ցույց էր տրվում, թե ինչպես պատրաստել տվյալ պատկերը, ապա երեխաները մեզ հետ միասին զուգահեռ ինքնուրույն պատրաստում էին: 6 պարապմունքից հետո երեխաներին պատրաստման ընթացքը այլևս ցույց չէր տրվում, հրահանգը հետևյալն էր. «Պատկերացրո՛ւ և պատրաստի՛ր ինքդ»: Երեխաները կարող էին ազատ ընտրել պատրաստվող նյութի գույնը, ձևը, չափը, խրախուսվում էր ինքնուրույնությունը:

Արտթերապիայի շրջանակներում երեխաներին սովորեցրել ենք *պատրաստել հանգուցավոր կամ կապավոր տիկնիկներ*՝ ձեռքի տակ եղած տարբեր կտորներից և նյութերից՝ օգտագործելով նաև խորանարդիկները, փայտիկները, գունավոր թղթերը, մատիտները, պարանները, գնդակները և այլն [3, էջ 25]:

Այս աշխատանքներին զուգահեռ անցկացվել է նաև **խաղաթերապիայի և հեքիաթի ընթերցման զուգահեռ, իրար համադրված պարապմունքներ,** որոնց նպատակն է.

✓ երեխաների մեջ բարձրացնել նրանց խաղային հմտությունների մակարդակը, որն էլ հիմք կդառնա խաղի ընթացքում նրանց կողմից խաղալիքի բազմաֆունկցոնալ զարգացման համար,

✓ խաղային գործունեության մեջ ներգրավել խմբի բոլոր անդամներին՝ խմբային խաղային հմտություններ ձևավորելու նպատակով,

✓ պարապմունքների ընթացքում կիրառել տվյալ խաղի և հեքիաթի համար անհրաժեշտ բոլոր պարագաները:

Միջին նախադպրոցականների համար ընտրվել են «Պապն ու շաղգամը», «Շունն ու կատուն», «Ոսկու կարասը», «Ծիտը» հեքիաթները, կրտսեր նախադպրոցականների համար՝ «Քաջ նազարը», «Մի կաթիլ մեղրը», «Կիկոսի մահը», «Անբան հուռին»:

Հեքիաթների նման ընտրությունը պատահական չէ. նրանցում կան շատ դերեր, օգտագործվող առարկաներ, որոնք լայն հնարավորություններ են տալիս երեխաների շարժողական ակտիվության, խոսքի, մտավոր զարգացման համար: Այս հեքիաթները կարելի է բեմականացնել որպես շարժողական, դերային խաղեր՝ ըստ կանոնների:

Տիկնիկային խաղալիքների օգնությամբ նախ մեկ անգամ պատմվել է հեքիաթը, ապա նրանց առաջարկել ենք բեմականացնել և խաղալ այն: Խաղալիքների և դերերի ընտրությունը թողնվել է երեխաների ընտրությանը, միայն կոնֆլիկտների դեպքում է մեր կողմից եղել որոշակի միջամտություն: Հեքիաթաթերապիան անցկացվել է այն ժամանակ, երբ ավարտվել էին երեխաների հետ ապլիկացիոն աշխատանքների և արտթերապիայի 10-ից ավելի պարապմունքներ: Նախադպրոցականներն արդեն ունեն խաղալիքներն ինքնուրույն պատրաստելու որոշակի հմտություններ, մոտիվացիա, և նպատակ կար պարզելու՝ արդյոք դրանք իրենց ներգործությունը կունենան խաղային նյութի ընտրության մեջ:

Խաղի ընթացքում երեխաներն ինքնուրույն ընտրում էին խաղալիքները և եղան գլխավոր հերոսներին պատրաստելու առաջարկներ: Արդյունքում նրանք պատրաստեցին.

✓ շուն ու կատու՝ խմորից, թղթից,

✓ պապիկ ու շաղգամ՝ խմորից, խորանարդիկներից, փայտիկներից,

✓ ոսկու համար կարաս՝ խորանարդիկներից, խմորից, որն իր մեջ ուներ շատ ոսկու կտորներ,

✓ լավաշ՝ խմորից, թղթից,

✓ ծիտիկ՝ խմորից,

✓ տատիկ՝ կտորներից և թելերից,

✓ օձ՝ թղթից և այլն:

**«Նախադպրոցականների խաղային հմտությունների ձևավորման և զարգացման ծրագրի»** ավարտից հետո հետազոտական խմբերի հետ կազմակերպվել են գիտափորձի արձանագրող փուլում անցկացված ազատ խաղեր՝ միևնույն խաղային իրադրությունում, նույն նպատակներով, խաղային նյութով: Ապա այդ խաղերի արդյունքները վերլուծվել են և համեմատվել արձանագրող փուլում ստացած արդյունքների հետ:

Ներկայացնենք խաղերի ընթացքում նախադպրոցականների կողմից խաղալիքների ընտրության քանակը և բազմաֆունկցիոնալ օգտագործման դեպքերը՝ ազատ խաղային իրադրություններում.

**Աղյուսակ 1.**

*Խաղալիքների ընտրությունը և բազմաֆունկցիոնալ կիրառումը միջին և ավագ նախադպրոցականների խմբերում*

| Միջին ն/դ խումբ | Խաղալիքի բազմաֆունկցիոնալ կիրառություն | Ընտրությունների քանակը | Ավագ ն/դ խումբ | Խաղալիքի բազմաֆունկցիոնալ կիրառություն | Ընտրությունների քանակը |
|---|---|---|---|---|---|
| | | | տիկնիկների ընտանիք՝հայր, մայր,որդի, դուստր | 0 | 5 |
| կապավոր, հանգուցային տիկնիկներ | 1 | 4 | սովորական մեծ տիկնիկներ | 0 | 3 |
| սովորական մեծ տիկնիկներ | 3 | 3 | խաղալիք կահույք և սպասքեղեն | 3 | 7 |
| հագուստ՝ տիկնիկների համար | 0 | 0 | տիկնիկների համար հագուստ, որը դրված է պայուսակում | 2 | 4 |
| օրորոց՝ տիկնիկի համար | 0 | 0 | կտորներ՝ բազմագույն | 8 | 9 |
| կտորներ | 6 | 9 | կավիճներ, թղթեր, սոսինձ | 4 | 6 |
| կավիճներ, թղթեր | 5 | | մեծ և փոքր ավտոմեքենաներ | 0 | 5 |
| մեծ և փոքր ավտոմեքենաներ | 2 | 6 | բուլավաներ | 7 | 8 |
| շարժվող խաղալիքներ | 0 | 2 | դատարկ տուփեր և տարաներ | 5 | 10 |
| ոչ մեծ զամբյուղ և տուփեր | 8 | 10 | խորանարդիկ | 12 | 10 |
| խորանարդիկներ | 12 | 14 | բուրգ | 5 | 8 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բուրգ | 9 | 10 | գնդակներ | 4 | 6 |
| գնդակներ | 5 | 9 | փայտիկներ | 6 | 9 |
| փայտիկներ | 9 | 7 | շրջված սեղան | 4 | 4 |

Այսպիսով՝ խաղալիքների բազմաֆունկցիոնալ օգտագործման ուսումնասիրումը՝ որպես խաղային գործունեության արդյունավետության գործոն, թույլ է տալիս եզրակացնելու՝

✓ Նախադպրոցականի կողմից խաղալիքի բազմաֆունկցիոնալ օգտագործման հիմքում ընկած են տվյալ խաղալիքի հոգեբանական ընտրության առանձնահատկությունները:

✓ Նախադպրոցականի խաղային գործունեության արդյունավետության գործոն է խաղալիքի բազմաֆունկցիոնալ օգտագործումը:

✓ Նախադպրոցականի խաղային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է նրա մեջ ձևավորել և զարգացնել խաղային հմտություններ:

✓ Խաղային գործունեության արդյունավետության բարձրացման և նախադպրոցականի մեջ խաղային հմտություններ ձևավորելու լավագույն միջոցներ են խաղաթերապիան, արտթերապիան, հեքիաթի ընթերցումները և ապլիկացիոն աշխատանքների իրականացումը: Այս բոլորի միաժամանակյա և զուգահեռ անցկացումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում հնարավորություն կտա ձևավորելու և զարգացնելու խաղային հմտություններ:

***Բանալի բառեր*** *- խաղային գործունեություն, խաղային իրադրություն, երեխա, պարապմունք, խաղալիք, ծրագիր*

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Абрамова В.,** Игрушка и антиигрушка. Дошкольное воспитание 2005, #4, ст. 98-108
2. Игра со всех сторон (книга о том, как играют дети и прочие люди) /Современные исследования, междисциплинарный подход, практические рекомендации, взгляд в будущее. Под ред. Жорняк Е. С., М., 2003 ст. 92
3. **Хилари К.**, Куклы, игры и игрушки. М., 2003
4. **Смирнова Е. О.,** Лучшие развивающие игры, Москва, 2010, с. 8-19

# РАСШИРЕНИЕ ВОЗМОЖНОСТЕЙ МНОГОФУНКЦИОНАЛЬНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ИГРУШЕК И ИГРОВЫХ ПРЕДМЕТОВ В УСЛОВИЯХ ЭФФЕКТИВНОЙ ОРГАНИЗАЦИИ ИГРОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

**Л. Н. КУРКЧЯН**
*Кандидат педагогических наук,*
*заведующий кафедрой общественных наук ГГУ,*
*доцент кафедры возрастной и педагогической психологии*
*Армянского государственного*
*педагогического университета им Х. Абовяна*
**А. М. САРГСЯН**
*Соискатель кафедры возрастной и педагогической психологии*
*Армянского государственного*
*педагогического университета им Х. Абовяна*

В статье представлено содержание разработанной авторами “Программы формирования и развития игровых навыков дошкольников”, возможности ее применения в дошкольных учебных заведениях для расширения возможностей многофункционального использования игрушек и игровых предметов.

# EMPOWERING MULTIFUNCTIONAL USE OF TOYS AND GAME OBJECTS IN CONDITIONS OF EFFECTIVE ORGANIZATION OF GAME ACTIVITY

L. N. QURQCHYAN
*PhD of Pedagogical Sciences,*
*Head of GSU Chair of Social Sciences,*
*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,*
*Assistant Professor of the Chair of Age and Educational Psychology*
A. M. SARGSYAN
*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,*
*Researcher of the Chair of Age and Educational Psychology*

The article presents the content developed Programs formation and development of gaming skills preschoolers, the possibility of its use in preschools, to empower multi-functional use of toys and game objects.